ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թվականի N 173-Ա

ՎԱՐԴԱՆ ՕԹԱՐԻ ՆԱԶԱՐԵԹՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ին մասի, 3-րդ պարբերության պահանջով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի 11.02.2020թ. N19 ծանուցումը լսումներին հրավիրվելու մասին /պատշաճ ծանուցվել է 11.02.2020թ, առձեռն/, Մասիսի համայնքապետարանի վարչական հանձնաժողովի /14.02.2020թ. N12 արձանագրություն/ առաջարկը, Վարդան Նազարեթյանի կողմից Մասիս քաղաքի 3-րդ թաղ., թիվ 17-րդ շենքի հարակից տարածքում ինքնակամ շինություն / ավտոտնակ / կառուցելու համար **որոշում եմ՝**

1.Վարդան Օթարի Նազարեթյանի նկատմամբ /ք.Մասիս 3-րդ թաղ., 13-րդ շենք, բն 20 / նշանակել վարչական տույժ սահմանված նվազագույն աշխատավարձի չորսհարյուրապատիկի չափով՝ 400.000/չորս հարյուր հազար/ ՀՀ դրամ:

2.Տուգանքը վճարել Մասիսի քաղաքային համայնքի բյուջե՝ 900435101440 հաշվեհամարին:

3. Վարչական իրավախախտում կատարողի կողմից տուգանքը պետք է վճարվի տուգանք նշանակելու մասին որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում,

իսկ այդ որոշումը գանգատարկելու կամ բողոքարկելու դեպքում՝ գանգատը կամ բողոքը առանց բավարարման թողնելու մասին ծանուցման օրվանից ոչ ուշ, քան տասնհինգ օրվա ընթացքում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

14 ՓԵՏՐՎԱՐԻ 2020թ.
Ք.ՄԱՍԻՍ